«ԱՄԵՐԻԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

MA: American Studies, International Relations

Երևանի պետական համալսարանի Ամերիկյան հետազոտությունների կենտրոնը ուրախ է տեղեկացնելու 2026/27 ուստարում «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ «Ամերիկագիտություն» մագիստրոսական կրթական ծրագրի մեկնարկի մասին: Կրթական ծրագիրը մշակվել և ներդրվել է ԵՊՀ երկարամյա գործընկեր Արիզոնայի պետական համալսարանի հետ համագործակցության շրջանակում և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան ֆինանսական օժանդակությամբ:

Մագիստրոսական կրթական ծրագրի գերակա նպատակներից է պատրաստել ապագա մասնագետ-շրջանավարտներ, որոնք կկարողանան ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառել ԱՄՆ-ի հետ կապված տարբեր ոլորտներում, որոնց թվում են ամերիկյան քաղաքականությունը և տնտեսությունը, կորպորատիվ ինստիտուտները, ԱՄՆ կառավարչական համակարգը և հանրային քաղաքականությունը, մշակույթը, աշխարհագրությունը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները: Ծրագրի կարևոր առանձնահատկություններից է հասարակագիտական հետազոտական մեթոդների դասավանդումը և համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Կրթական ծրագրի այլ առավելությունների շարքում են՝

- Մասնագիտական կարիերայի հնարավորությունների ստեղծում միջազգային հարաբերությունների բնագավառում, ԱՄՆ-ի հետ կապված կամ ամերիկյան հովհանու ներքո գործող միջազգային կազմակերպություններում, ամերիկյան մշակութային և հասարակական կառույցներում, ինչպես նաև ամերիկյան բիզնեսի և կորպորատիվ ինստիտուտների հետ կապված ոլորտներում,
- Պրակտիկայի հնարավորություններ,
- Կրթաթոշակի շնորհման հնարավորություն՝ ուսման վարձի մասնակի փոխհատուցման նպատակով,
- Կալիֆորնիայի պետական համալսարանի կողմից իրականացվող ավարտական հավաստագրային (Graduate Certificate, տևողությունը՝ երկու կիսամյակ, առցանց) ծրարագրին մասնակցության հնարավորություն,
- Արիզոնայի պետհամալսարանի կողմից իրականացվող հավաստագրային կարճաժամկետ կրթական ծրագրին մասնակցելու հնարավորություն (Certificate Program):

Ամերիկյան հետազոտությունների կենտրոնի կողմից առաջարկվող «Ամերիկագիտություն» կրթական ծրագրի հիմնական դասընթացները կենտրոնանում են հետևյալ ուղղությունների վրա.

- ԱՄՆ արտաքին քաղաքականություն
- ԱՄՆ Սահմանադրություն և դատական համակարգ
- Քաղաքականության կիրառական վերլուծություն և լավ կառավարում
- Մերձավոր Արևելքում և հարակից տարածքներում ամերիկյան ռազմավարական շահեր
- ԱՄՆ էներգետիկ քաղաքականություն և շրջակա միջավայր
- ԱՄՆ կառավարություն և հանրային քաղաքականություն
- Քաղաքատնտեսություն, բիզնես և ԱՄՆ կորպորացիաներ
- Ամերիկյան հասարակություն, տարածաշրջանային քաղաքականություն և ամերիկահայ սփյուռք
- Գլոբալ կառավարում և բանակցային տեխնոլոգիաներ
- Միջկառավարական հարաբերություններ

American Studies (International Relations) MA Program

American Studies Center at Yerevan State University is pleased to announce the opening of its new M.A. program in American Studies (degree in International Relations) in the 2026-27 academic year. The M.A. program is designed and developed in collaboration with YSU's longstanding institutional partner, Arizona State University, the largest public university in the United States, and funded by a grant from the U.S. Embassy in Armenia.

The newly developed M.A. program offers a rigorous and analytically intensive two-year curriculum in American Studies, International Relations, with majors concentrating in fields of U.S. foreign policy, U.S. international and domestic policies, and American social, economic, political, and public life. One of the special features of the program is its focus on social science research methodology.

Among the benefits that the M.A. program in American Studies offers are:

- Professional career development related to international relations, U.S.-led global organizations, American cultural and social institutions, and the corporate structure and practice of American business.
- Internship opportunities tied to U.S. and other international agencies.
- Competitive scholarship opportunities to cover part of the tuition fee.
- Graduate Certificate (two semesters, online) program by CSUN with opportunity to continue full MA degree education at CSUN.
- Short-term Certificate Program participation opportunities, Arizona State University.

The core M.A. courses offered through the American Studies Center concentrate on:

- U.S. Foreign Policy
- American Strategic Interests in the Middle East and Adjoining Areas
- U.S. Energy Policies and the Environment
- U.S. Government and Public Policy
- Political Economy, Business, and U.S. Corporations
- American Society, Regional Politics, and the Armenian-American Diaspora
- The U.S. Constitution and Judicial System
- Public and Social Media and the Mass Communications in the U.S.
- State and Local policymaking in the U.S.
- Applied policy analysis and good governance
- Intergovernmental Relations
- Global governance and negotiation technologies